

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*Հոկտեմբեր*

*2021թ.*

29.10.2021

**ՀՀ վարչապետի Սյունիքի մարզ այցելության ժամանակ տեղի ունեցած միջադեպի գործով 21 մեղադրյալի մասով նախաքննությունն ավարտվել է**

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում իրականացված քննչական և դատավարական այլ մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են 2021թ. ապրիլի 21-ին ՀՀ վարչապետի՝ Սյունիքի մարզ կատարած այցելության ժամանակ տեղի ունեցած խուլիգանության դեպքի հանգամանքները:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից, նշելով, որ քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալը և Շուռնուխ բնակավայրի վարչական ղեկավարը, տեղեկանալով ՀՀ վարչապետի կողմից 2021թ. ապրիլի 20-ին Սյունիքի մարզ կատարած այցի մասին, Գորիս-Կապան ավտոճանապարհին հարակից Շուռնուխ բնակավայրի տարածքում մի խումբ անձանց կողմից ուրիշի գույքը վնասելով խուլիգանություն կատարելու նպատակով կազմակերպել են անձանց հավաքագրման գործընթաց:

Ըստ քննչական կոմիտեի հաղորդագրության՝ նշված օրը, ժամը 10:00-ի սահմաններում, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու դիտավորությամբ, վերոնշյալ երկու անձանց կազմակերպմամբ, մի խումբ անձինք հավաքվել են Գորիս-Կապան ավտոճանապարհի հարակից տարածքում, որտեղ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալի ցուցումներով եկել են նաև Գորիս համայնքի տարբեր բնակավայրերի մի շարք ներկայացուցիչներ:

Հավաքված անձանց կերակրելու և հանցանքի կատարման վերաբերյալ ցուցումներ տալու նպատակով, Գորիս համայնքի ղեկավարի տեղակալի կազմակերպմամբ, ժամը 14:50-ի սահմաններում տարածքում հավաքված անձինք սնվել են Գորիս-Կապան ավտոճանապարհի հարևանությամբ գտնվող բլրակի վրա պատրաստված սեղանների շուրջ, որի ընթացքում, վերջիններիս վրա ներազդելու և խուլիգանական գործողություններն ավելի ակտիվ ու արդյունավետ կատարելու համար, նրանց ակոսող են հյուրասիրել, ինչպես նաև՝ նրանց մոտ վճռականություն առաջացնելու և ակտիվ գործողությունների դրդելու նպատակով՝ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալը և Շուռնուխ բնակավայրի վարչական ղեկավարը վատաբանելու միջոցով հավաքվածներին տրամադրել են ՀՀ վարչապետի դեմ:

Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ ասվում է, որ շարունակելով իրենց հանցավոր գործողությունները՝ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալը և Շուռնուխ բնակավայրի վարչական ղեկավարը ժամը 16:15-ի սահմաններում հավաքվածներին հրահանգել են տվյալ ճանապարհահատվածով վարչապետի ավտոշարասյան անցնելու ընթացքում փակել նրա ճանապարհը և խոչընդոտել ավտոշարասյան տեղաշարժը: Այդ ընթացքում հիշյալ անձինք հավաքվել են ավտոճանապարհի մոտ, որտեղ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալը խուլիգանության մասնակիցներին հրահանգավորել է հարվածել վարչապետին սպասարկող ավտոմեքենային: Այնուհետև, երբ հասարակական կարգի պահպանության նպատակով տվյալ տարածք են ժամանել ոստիկանության աշխատակիցները, ավտոճանապարհի երթևեկությանը չխոչընդոտելու շուրջ բանակցություններ վարելուց հետո, Գորիս համայնքի ղեկավարի տեղակալի և Շուռնուխ բնակավայրի վարչական ղեկավարի ցուցումներով խուլիգանության մասնակիցների մեծ մասը հավաքվել են դեպի Գորիս տանող ճանապարհի եզրին:

ՀՀ վարչապետի և նրան ուղեկցող անձանց կողմից ավտոշարասյունով Շուռնուխ բնակավայրի տարածքով անցնելու ընթացքում խուլիգանության մասնակիցները, այդ թվում նաև Գորիս համայնքի ղեկավարի տեղակալը, բացահայտ անհարգալից վերաբերմունք ու

անթաքույց արհամարհանք դրսևորելով բնակավայրի բնակիչների և ուղիղ հեռարձակմամբ կատարվող իրադարձություններին հետևող բազմաթիվ անձանց նկատմամբ, հրապարակայնորեն վիրավորական արտահայտություններ են հնչեցրել, չեն ենթարկվել իրավապահ մարմինների օրինական պահանջներին, իսկ մի խումբ մասնակիցներ դիտավորությամբ հարվածել են ՀՀ վարչապետին սպասարկող «Մերսեդես Ս 600», ինչպես նաև ավտոշարայան «Տոյոտա Լենդ Կրաուզեր 200» մակնիշի ավտոմեքենաներին:

Գորիս համայնքի ղեկավարի տեղակալի և Շուռնուխ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից կազմակերպած խուլիգանության արդյունքում խաթարվել է հասարակական անդորրը և տրանսպորտի անխափան աշխատանքը, խոչընդոտվել է ՀՀ վարչապետի և նրան ուղեկցող անձանց տեղաշարժը, ինչպես նաև դիտավորությամբ առանձնապես խոշոր չափերի՝ 24.011.500 ՀՀ դրամի գույքային վնաս է պատճառվել պետական սեփականություն հանդիսացող «Մերսեդես Ս 600» մակնիշի ավտոմեքենային:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ Գորիս համայնքի ղեկավարի տեղակալին և Շուռնուխ բնակավայրի վարչական ղեկավարին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 38-185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 11 անձի մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ 8 անձի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

Նշված 21 անձանց վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթ, նախաքննությունն ավարտվել է, և քրեական գործը, մեղադրական եզրակացությունը հաստատելու և դատարան ուղարկելու միջնորդությամբ, ուղարկվել է դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին:

*Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1066845.html>

**29.10.2021**

### **Վերիշենում շինարարական եռուզեռ է**

Վերիշենում շինարարական եռուզեռ է. մանկապարտեզի օժանդակ տարածքների վերակառուցման շինաշխատանքներն արդեն սկսվել են: Օժանդակ տարածքները վերակառուցելու խնդիրը հրատապ էր, քանի որ երեխաների հերթագրության թիվը զգալի ավելացել էր: Այժմ Վերիշենի մանկապարտեզ է հաճախում 90 երեխա, օժանդակ տարածքները վերակառուցելով կստեղծվեն նոր խմբասենյակներ, ինչի շնորհիվ մոտ 40-50 երեխա ևս կկարողանա հաճախել մանկապարտեզ:

Ծրագիրն իրականացվում է «Ամերիկյան Փարոս» հիմնադրամի կողմից՝ Գորիսի համայնքապետարանի հետ համատեղ: Շինաշխատանքներն իրականացնելուց հետո՝ մանկապարտեզի հիմնովին նորոգման հարցը ևս կլծուվի «Ամերիկյան Փարոս» հիմնադրամի կողմից:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/4568548113239400>

**29.10.2021**

**Հոկտեմբերի 29-ի դրությամբ նախորդող շաբաթվա ընթացքում Սյունիքի մարզում գրանցվել է նոր կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու 348 նոր դեպք**

Հարգելի՛ սյունեցիներ

✔ Ներկայացնում ենք նոր կորոնավիրուսային հիվանդության հետ կապված վիճակագրության պատկերը Սյունիքում՝ կոչ անելով լինել զգոն, պահպանել հակահամաճարակային կանոններն ու պատվաստվել՝ օգնելով համավարակի դեմ պայքարին, ապահովելով ձեզ ու ձեր հարազատներին:

✔ Հիշեցնում ենք, որ նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ կարող եք պատվաստվել մարզի բոլոր բժշկական կենտրոններում եւ առողջության առաջնային պահպանման կենտրոններում (գյուղական ամբուլատորիաներում)՝ աշխատանքային օրերին ու ժամերին, իսկ բժշկական կենտրոններում կարող եք պատվաստվել նաեւ շաբաթ եւ կիրակի օրերին:

✔ Այսպիսով՝ հոկտեմբերի 29-ի դրությամբ նախորդող շաբաթվա ընթացքում Սյունիքի մարզում գրանցվել է նոր կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու

- ▶ 348 նոր դեպք,
- ▶ առողջացել է 219 հոգի,
- ▶ 76 հոգի բուժվում է Կապանի Բկ-ում,
- ▶ 29 հոգի՝ Գորիսի ԲԿ-ում,
- ▶ 14 հոգի ծայրահեղ ծանր վիճակում է,
- ▶ 61 հոգի՝ թթվածնակախյալ,
- ▶ 618 մարդ բուժվում է ամբուլատոր պայմաններում:
- ▶ Գրանցվել է 12 մահ:

✔ Այս պահի դրությամբ մարզում պատվաստվել է 24 684 հոգի, որից առաջին դեղաչափն ստացել է 16 735 հոգի՝ որը մարզի 18-ից բարձր տարիքի բնակչության 18. 4 տոկոսն է:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/hoktemberi-29-i-drutyamb-nakhordokh-shabatva-yntatsqum-syuniqi-marzum-grantsvel-e-nor-koronavirusayin-hivandutyamb-varakvelu-348-nor-depq>

**27.10.2021**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ !!! !!**

!!! Ուսուցանող մարզիչ

Աշխատանքի նկարագիր

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է մոտիվացված, խանդավառ և տեխնոլոգիաների ոլորտում բազային գիտելիքներ ունեցող մասնագետների, ովքեր պատրաստակամ են փորձարկել նոր տեխնոլոգիաներ՝ մեկնարկելով իրենց կարիերան որպես ուսուցանող մարզիչ Կապանի Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում:

Գործառույթներ

Հիմնվելով ուսուցման հաստատված մոդելի վրա՝ ուսուցանողները անմիջականորեն կաշխատեն Թումո անդամների հետ՝ կատարելով հետևյալը.

- Աջակցել նրանց ուսումնական առաջընթացին
- Օգնել նրանց նախագծել իրենց անհատական ուսումնառության պլանը
- Ուղղորդել նրանց՝ վարժանքներն ավարտին հասցնելու համար
- Խրախուսել ու քաջալերել անդամներին կիրառելու ինքնուսուցման և տեխնոլոգիաների ներուժը
- Օգնել տեխնոլոգիաներին առնչվող տարբեր բնագավառներում գործնական դասընթացների և նախագծերի համակարգման գործում

• Հետևել ուսանողների հաճախելիությանը և հետադարձ կապ ապահովել ուսանողների ուսումնական աճի վերաբերյալ: Միջոցներ ձեռնարկել ուսանողներին ներգրավելու և տեխնոլոգիաների հանդեպ ոգեշնչելու համար

• Հանդես գալ ուսանողներին մարզիչի դրական ու մասնագիտական պատկերով

• Խթանել համագործակցությունն ու խանդավառ ուսուցումը

• Ուսուցանողը նաև հետադարձ կապ պետք է ապահովի Թումոյի ուսումնական բովանդակությունը գնահատողներին՝ նոր վարժանքների ստեղծման ու արդեն առկա վարժանքների վերամշակման ընթացքում:

Անհրաժեշտ որակավորումներ և հմտություններ

• Մարդկանց հետ շփվելու գերազանց հմտություններ ու դեռահասների հետ աշխատելու ձիրք

• Թումոյի հիմնական ուսումնական ոլորտներից ( անիմացիա, խաղերի ստեղծում, կայքերի մշակում և ֆիլմերի ստեղծում) առնվազն մեկի տարրական իմացություն և կարողություն՝ տվյալ ոլորտում սովորելու տեխնիկական հասկացություններ և ծրագրային գործիքներ.

• Բազմակողմանի ընդունակություններ այնպիսի տեխնիկական ոլորտներում, ինչպիսիք են գրաֆիկական ձևավորումը կամ ծրագրավորումը, ինչպես նաև արտիստիկ հմտություններ, ինչպիսիք են նկարչությունն ու ստեղծագրությունը.

• Պատրաստակամություն զարգացնելու բարձրակարգ հմտություններ, ինչպիսիք են ստեղծարարությունը, վերլուծական մտածողությունն ու նախաձեռնող լինելու ունակությունը, ինչպես նաև կազմակերպչական ընդունակությունները, ինչպիսին թիմային աշխատանքն է, հաղորդակցման ու հետազոտական հմտությունները.

• Համացանցից, առցանց հնարավորություններից ու գործիքներից օգտվելու կարողություն

• Ուսանող կամ շրջանավարտ ճանաչված համալսարաններից մեկում

• Գերազանց հաղորդակցման հմտություններ՝ ներառյալ գրավոր հաղորդակցումն ու միջանձնյա շփումը, ինչպես նաև հրապարակային ներկայանալու կարողությունը (անզլերենի իմացությունը առավելություն է):

Դիմելու համար ուղարկել ինքնակենսագրականը՝ [anush.abgaryan@tumo.org](mailto:anush.abgaryan@tumo.org) էլ-հասցեին:

## !! Մաքրուհի

Աշխատանքի նկարագիր

Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը փնտրում է մաքրասեր, բարեհամբույր և վերին աստիճանի պատասխանատու մաքրուհիների:

Գործառույթներ

Մաքրուհու աշխատանքային պարտականություններն են՝

• Իրականացնել Թումո տուփի տարածքի, միջանցքի, աստիճանների և սանհանգույցի հավաքումը և մաքրումը

• Հեռացնել փոշին, ձեռքով կամ մեքենայի օգնությամբ մաքրել հատակը, պատերը, առաստաղը, պատուհանները, դռները, կահույքը և գորգերը

• Մաքրել և ախտահանել սեղանները, համակարգիչները և այլ առկա տեխնիկան

• Մաքրել աղբարկղները և ախտահանել դրանք

• Հավաքել աղբը և դրանք տեղափոխել նախատեսված վայր

• Հավաքվող տարածքներում պահպանել սանիտարահիգիենիկ կանոնները

• Անհրաժեշտության դեպքում կատարել նաև այլ տարածքների մաքրման աշխատանքներ

Անհրաժեշտ որակավորումներ և հմտություններ

- Ժամանակի կառավարում
- Հետևողականություն և ուշադրություն
- Ինքնուրույն աշխատելու ունակություն
- Դիմացկունություն
- Մաքրուհու աշխատանքային փորձ

Դիմելու համար ուղարկել ինքնակենսագրականը՝ [anush.abgaryan@tumo.org](mailto:anush.abgaryan@tumo.org) էլ-հասցեին:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/1505943656452814>

**27.10.2021**

**Հայտարարվում է մրցույթ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի արտադրության վարպետների թափուր տեղերի համար**

Հայտարարվում է մրցույթ «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի արտադրության վարպետների թափուր տեղերի համար՝

1	«Գեղանկարչություն և քանդակագործություն» մասնագիտության արտադրության վարպետ	0,5 դրույք	Համապատասխան մասնագիտական աշխատանքի փորձ և միջին կամ բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն
2	«Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում (որակավորումը՝ մատնահարդար» մասնագիտության արտադրության վարպետ	1 դրույք	
3	«Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ» մասնագիտության արտադրության վարպետ	0,5 դրույք	

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, հաստատության կողմից նախապես կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Յուրաքանչյուր մասնակցին պատրաստվելու համար տրվելու է մինչև 15 րոպե ժամանակ իսկ պատասխանը արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատություն է ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում
- 2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- 3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
- 5) ինքնակենսագրություն
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝

Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հողվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից,

3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված այնպիսի հիվանդությամբ,

որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության կատարմանը,

4) դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են մրցույթի հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 2021թ. նոյեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2021թ. **նոյեմբերի 26-ին ժամը 14.00-ին** «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզի, ք. Գորիս, Հայկազունիների փող. 4 հասցե:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-59-54-18 077-78-22-79, հեռախոսահամարներով:

**«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ 27.10.2021թ.**

Աղբյուրը՝ <https://syuniacyerki.am/haytararvum-e-mrtsuyt-gorisi-petakan-qolej-poak-i-artadrutyam-varpetneri-tapur-tekheri-hamar>

**25.10.2021**

Հոկտեմբերի 27-ին և 28-ին ռուսական սահմանապահ զորամասի հրաձգարանում կատարվելու են կրակային զորավարժություններ. Մեղրիի համայնքապետարան

Մեղրիի համայնքի հարգելի՛ բնակիչներ,

☞ տեղեկացնում ենք, որ հոկտեմբերի 27-ին և 28-ին ռուսական սահմանապահ զորամասի հրաձգարանում կատարվելու են կրակային զորավարժություններ:

☞ Կրակոցների ձայներ լսելու դեպքում հորդորում ենք հանրության շրջանում չառաջացնել անհարկի խուճապ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/meghri.municipality/posts/1578791775785898>

**25.10.2021**

ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱ՝ ԿԱՐՃԵՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻՆ

Նախագծի մեկնարկ Սյունիքում. Գերմանիայի դեսպանության Փոքր դրամաշնորհների ծրագրով Մեղրի համայնքի Կարճևան գյուղի դպրոցի տանիքին տեղադրվել է արևային կայան:

Հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ «Այլընտրանք վառելափայտին՝ արևային էներգիա Մեղրի խոշորացված համայնքի Կարճևան բնակավայրի դպրոցի համար» ծրագրի շրջանակներում, Գերմանիայի դեսպանության ֆինանսավորմամբ, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի Կարճևանի հիմնական դպրոցի տանիքին տեղադրված 10.35 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի և էներգարդյունավետ ջեռուցման համակարգի մեկնարկի արարողությունը: Միջոցառմանը ներկա էին Մեղրի համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արարատ Թումանյանը, Կարճևանի հիմնական դպրոցի տնօրեն Սվետլանա Պապյանը, «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ նախագահ Սարգիս Աղայանը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանատան ներկայացուցիչ Յակոբ Յիգլերը, համայնքապետարանի աշխատակիցներ և այլ հյուրեր: Դպրոցի աշակերտները հյուրերի համար պատրաստել էին փոքրիկ ներկայացում, որին հաջորդեց «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ համահիմնադիր Արսեն Գասպարյանի ելույթն, որի շրջանակներում ներկայացվեծ արևային համակարգը, դրա սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը:

Սոցիալ-տնտեսական բարդ իրավիճակի և համայնքում գազի մատակարարման ենթակառուցվածքների բացակայության պայմաններում դպրոցի ջեռուցումը կազմակերպվում է վառելափայտի միջոցով, ինչն անընդունելի է ոչ միայն սոցիալ-տնտեսական և բնապահպանական, այլ նաև էկոլոգիական տեսանկյունից: Ծրագրի հիմնական նպատակն է տրամադրել այլընտրանքային լուծում դպրոցի ջեռուցման նպատակով, որը կփոխարինի վառելափայտը:

Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրում բնակվում է ավելի քան 290 բնակիչ, իսկ դպրոցում ուսանում է շուրջ 32 աշակերտ: Արևային կայանը կկրճատի դպրոցի էներգետիկ ծախսերը, կնվազեցնի CO2 արտանետումները:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/meghri.municipality/posts/1578943865770689>

**25.10.2021**

### **Նոր մարզադաշտ-խաղահրապարակ Գորիսում**

Հոկտեմբերի 19-ին ժամը 15:00-ին Գորիս համայնքի Անկախության 2 և Մաշտոցի 1 հասցեների բազմաբնակարան շենքերի հարակից տարածքում տեղի ունեցավ հիմնանորոգված մարզադաշտի և նոր մանկական խաղահրապարակի պաշտոնական բացման արարողությունը, որին ներկա էին Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Քոչարյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, ծրագիրն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ այդ թվում ԱՄՆ պետդեսպարտամենտի բնակչության, փախստականների և միգրացիայի հարցերով բյուրոյի տարածաշրջանային համակարգող տիկին Ռենե Լարիվիերին, Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ դեսպանատան քաղաքական հարցերով պաշտոնյա տիկին Քրիստինա Հանսելը, Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ՓԳՀ ներկայացուցիչ Աննա Կարին Օստը, ՄԱԿ-ՓԳՀ միջազգային աշխատակից Ռասել Ֆրեյզերը, ինչպես նաև ՄԱԿ-ի փախստականների գործակալության արտաքին կապերի պատասխանատու տիկին Անահիտ Հայրապետյանը, և համայնքի բնակիչներ: Մինչ բացման արարողությունը հյուրերը հանդիպում ունեցան Գորիսի համայնքապետարանում, որի ընթացքում քննարկվեցին նախկինում իրականացված ծրագրերը, համայնքում առկա խնդիրները, ինչպես նաև հետագա համագործակցության համար հնչեցին նոր ծրագրային առաջարկներ: Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ



Կարեն Քոչարյանը Ռենե Լարիվիերին հանձնեց շնորհակալագիր արդյունավետ համագործակցության համար: Համայնքապետարանի հետ համատեղ իրականացված ծրագրերից է նաև մարզադաշտի վերանորոգումն ու խաղահրապարակի կառուցումը: Բացման արարողությունը սկսվեց «Վահե Մելքունյան» պարային ստուդիայի սաների գեղեցիկ կատարումով, այնուհետև հյուրերին ողջունեց Գորիսի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Արմինե Հովակիմյանը: Գորիսի մանկապատենական մարզադպրոցի սաները վերանորոգված մարզադաշտում հանդես եկան ցուցադրական ելույթներով, իսկ Գորիս համայնքի մանկական գրադարաններում գործող զարգացման կենտրոններ հաճախող երեխաներն իրենց ձեռքի աշխատանքները նվիրեցին հյուրերին՝ հայտնելով իրենց շնորհակալությունն ու գոհունակությունը: Ամենուրեք տոնական տրամադրություն էր, մանկական խինդ և ուրախություն, իրականություն դարձած երազանք: Խաղահրապարակ-մարզադաշտն իր բնույթով առաջինն է Գորիս համայնքում, ինչը շատ կարևոր է, քանի որ այդպիսով բարձրացվում է սպորտի դերը հասարակության մեջ, ձևավորվում է նոր մշակույթ: Առաջիկայում համատեղ ջանքերով, Գորիսի համայնքապետարանի նախաձեռնությամբ կյանքի կկոչվեն նոր ծրագրեր, որոնք կնպաստեն Գորիս համայնքի զարգացմանը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/GorisMunicipality/posts/4555511581209720>

**24.10.2021**

**Մուրեն Պապիկյանն այցելել է Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ**  
Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի և Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի հետ այսօր այցելել ենք Տաթև-Աղվանի ճանապարհահատված՝ ծանոթանալու ընթացիկ ճանապարհաշինական աշխատանքներին:

Ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհը նախատեսվում է ամբողջությամբ շահագործման հանձնել մինչև նոյեմբերի վերջ: Ակտիվ ընթացքի մեջ է նաև Սյունիքում այլընտրանքային ճանապարհների կառուցումը, որոնք վերջնականորեն պատրաստ կլինեն գալիք տարվա զարնանը, ինչի արդյունքում Սյունիքի մարզում կունենանք ճանապարհային հաղորդակցության լիովին նոր համակարգ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/papikyan.suren/posts/1670380226504172>

**24.10.2021**

**Հայտնի են Կապանում անցկացվելիք ՏԻՄ ընտրություններում «Շանթ դաշինքի» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակները**  
Հայտնի են Կապանում 2021թ. նոյեմբերի 14-ին անցկացվելիք ՏԻՄ ընտրություններում «Շանթ դաշինքի» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակները:

Ինչպես տեղեկանում ենք ԿՀՀ-ից, «Շանթ դաշինքի» ցուցակը գլխավորում է Գևորգ Փարսյանը, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակը գլխավորում է Դավիթ Դանիելյանը:

**«Շանթ դաշինք»**

Փարսյան Գևորգ Ռազմիկի  
Արզումանյան Մեսրոպ Թորոսի  
Մեժլումյան Անուշ Ռազմիկի  
Թադևոսյան Գոռ Հովհաննեսի  
Հարությունյան Մարատ Հրանտիկի  
Մելիքսեթյան Անի Հայրապետի

Ավետիսյան Մհեր Սամվելի  
Համբարձումյան Արթուր Ռաֆիկի  
Թադևոսյան Գայանե Լյովայի  
Հարությունյան Անուշավան Մերյոժայի  
Զաքարյան Սպարտակ Շմավոնի  
Գալստյան Թերեզա Մանվելի  
Դավթյան Արման Մարտիրոսի  
Գալստյան Զորայր Ապրեսի  
Հարությունյան Հասմիկ Խաչիկի  
Ղազարյան Վահան Ռաֆիկի  
Հարությունյան Յուրիկ Դավիթի  
Ալեքսանյան Անժելա Գևորգի  
Հարությունյան Արշակ Անուշավանի  
Մարտիրոսյան Ալեն Արմենի  
Մարտիրոսյան Հասմիկ Սամվելի  
Իվանյան Տիգրան Վահանի  
Հարությունյան Արտյոմ Արշավիրի  
Մարտիրոսյան Սոնա Ռուբենի  
Գրիգորյան Ալեքսանդր Էդիկի  
Խաչատրյան Արտակ Արմենի  
Ավետիսյան Հասմիկ Վաչեի  
Հովհաննիսյան Արմեն Գառնիկի  
Մարտիրոսյան Արմեն Ռուբիկի  
Միքայելյան Հերմինե Գառնիկի  
Դինունց Գեվորգ Արտուշի  
Գևորգյան Արթուր Սամվելի  
Հարությունյան Մարինե Նորիկի  
Ալեքսանյան Արմեն Արտավազդի  
Գևորգյան Վարդան Կարենի  
Մնացականյան Աննա Մարտունի  
Մարգարյան Սամվել Գեվորգի  
Հարությունյան Գառնիկ Շախնազարի  
Շահնազարյան Զարինե Սոսի  
Վեզիրյան Մհեր Վարդանի  
Հայրապետյան Սասուն Մելիքի  
Հովակիմյան Մանե Զավենի  
Հակոբյան Վիլեն Գագիկի  
Թումանյան Տիգրան Դավիթի  
Բարսեղյան Նելլի Գարսեվանի  
Միմոնյան Վիգեն Ռուբենի  
Բաղդասարյան Արթուր Արմենի  
Անդրեասյան Անուշ Աշոտի  
Մարտիրոսյան Սեվադա Մեյրանի  
Գեվորգյան Արտյոմ Սպարտակի  
Կարապետյան Աշխեն Տոլակի  
Հարությունյան Մարգար Սամվելի  
Սաֆարյան Անդրանիկ Սամվելի

Գալստյան Էլզա Հարությունի  
Պատվականյան Ժիրայր Յուրիկի  
Նուրիջանյան Էրիկ Սամվելի  
Բաղդասարյան Անահիտ Բենիկի  
Համբարձումյան Արտաշես Վաղարշակի  
Հակոբյան Բագրատ Աշոտի  
Զաքարյան Աննա Գեղամի  
Հովհաննիսյան Արթուր Արշավիրի  
Բաղդասարյան Խաչատուր Արտաշի  
Ներսեսյան Անի Վահանի  
Միմոնյան Սամվել Արսենի  
Դավթյան Ղահրաման Գրիշայի  
Փարսյան Ծովինար Կամոյի  
Սարգսյան Սասուն Հակոբի  
Զաքարյան Հարություն Միշայի  
Փարսյան Հասմիկ Կամոյի  
Իվանով Իվան Անատոլիի

**«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն**

Դանիելյան Դավիթ Հրանտի  
Դավթյան Նարեկ Դավիթի  
Գրիգորյան Նարինե Ժորայի  
Հարությունյան Հայկ Սաշայի  
Հովսեփյան Էդիկ Արմենի  
Վարդանյան Ժաննա Վալերիի  
Կոստանդյան Իվան Գրիշայի  
Ասատրյան Ասատուր Ասլանի  
Մարտիրոսյան Հերմինե Աշոտի  
Աթայան Տիգրան Արտուրի  
Կոստանդյան Էրիկ Ռոբերտի  
Մանուկյան Արմինե Միքաելի  
Մարգարյան Գոռ Լեվոնի  
Միքայելյան Տիգրան Գարեգինի  
Դավթյան Փառանձեմ Ռոբերտի  
Մարտիրոսյան Ալեն Արամի  
Հարությունյան Սպարտակ Արշավիրի  
Սարգսյան Արաքսյա Ռազմիկի  
Պետրոսյան Հայկ Հմայակի  
Հարությունյան Վահագն Աշոտի  
Պապեյան Արմինե Արայի  
Հովհաննիսյան Ռաֆիկ Կարենի  
Աթաջանյան Միլեր Կարենի  
Օհանջանյան Անի Արմենի  
Մարտիրոսյան Յուրիկ Սուրիկի  
Հակոբյան Հակոբ Արտավազդի  
Գևորգյան Մանյա Սերգեյի  
Զիլֆիգարյան Գեորգի Հովիկի

Զաքարյան Ռոմա Հակոբի  
Բաղդասարյան Սոնա Սամվելի  
Խաչատրյան Աշոտ Վլադիկի  
Մնացականյան Արթուր Էդիկի  
Մկրտչյան Աննա Վալերիկի  
Առաքելյան Արքայիկ Գրիշայի  
Ավետիսյան Մուրազ Ավետիսի  
Սարգսյան Լուսինե Կարոյի  
Ստեփանյան Լավրենտ Արայի  
Բաղայան Արսեն Մուրազի  
Հարությունյան Հերիքնազան Մուրենի  
Լաչինյան Գոռ Արծրունի  
Թորոսյան Վիլյամ Համլետի  
Խաչատրյան Սվետլանա Մեսրոպի  
Գրիգորյան Երեմ Նվերի  
Կարապետյան Սլավիկ Լյուդվիգի  
Մինասյան Նելլի Աշոտի  
Ավագյան Հայրապետ Շահենի  
Գրիգորյան Մանվել Մամիկոնի  
Հարությունյան Լիլիթ Սպարտակի  
Գևորգյան Գոռ Գևորգի  
Վեզիրյան Արմենակ Սարգիսի  
Ամիրջանյան Ռոզա Մարտիկի  
Դանիելյան Վահան Նորիկի  
Քոչարյան Արտավազ Մայիսի  
Իսրայելյան Լուսինե Ռոբերտի  
Գրիգորյան Մարտին Արարատի  
Փարսադանյան Անդրանիկ Շավարշի  
Բարսամյան Փառանձեմ Վանուշի  
Զաքարյան Ֆրունզիկ Գավրուշայի  
Պապյան Միլենա Վարդանի  
Մելքումյան Արա Արծրունու  
Փարսադանյան Ռիմա Ժիրայրի

Աղբյուրը՝ <https://www.tert.am/am/news/2021/10/24/news/3715458>

## 24.10.2021

**Գորիսում, Մեղրիում, Տաթևում, Տեղում ավագանիներն ընտրված են, թեև պարզ չէ, թե Մեղրիում եւ Տաթևում ո՞ր քաղաքական ուժի ներկայացուցիչը կզլխավորի համայնքը**

Հոկտեմբերի 24-ին տեղի է ունեցել թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովի նիստ, որի ընթացքում հաստատվել են 2021 թ, հոկտեմբերի 17-ին Գորիս, Տաթև, Տեղ համայնքներում կայացած ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները: Հանձնաժողովն ըստ համայնքների յուրաքանչյուր կուսակցության հատկացրել է հասանելիք տեղերն ավագանու կազմում:

Ըստ այդմ՝ Գորիս համայնքում «Ա.Առուշանյան» դաշինքին հատկացվել է 13 մանդատ, «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությանը՝ 1 մանդատ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ 7 մանդատ:

Տարբեւ համայնքում «Ապրելու երկիր» կուսակցությանը հատկացվել է 2 մանդատ, «Շանթ դաշինք» կուսակցությանը՝ 6 մանդատ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը՝ 7 մանդատ:

Տեղ համայնքի ավագանում «Ապրելու երկիր» կուսակցությունը կունենա 5 մանդատ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ 10 մանդատ:

Այսօր տեղի է ունեցել նաեւ թիվ 35 տարածքային ընտրական հանձնաժողովի նիստը, որի ընթացքում բաշխվել են Մեղրի համայնքի ավագանու կազմում ընտրությանը մասնակցած կուսակցությունների հատկացվելիք տեղերը:

2 մանդատ կունենա «Ազատական» կուսակցությունը, 6 մանդատ՝ «Հանրապետություն» կուսակցությունը, 5 մանդատ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, 2 մանդատ՝ «Ապրելու երկիր» կուսակցությունը:

Ավագանու ցուցակներում ընդգրկվածներն ինքնաբացարկ կարող են ներկայացնել մինչեւ հոկտեմբերի 27-ը՝ ժամը 14.00-ն: Իսկ հոկտեմբերի 28-ին կկազմվեն նշված համայնքների ավագանու անդամների անվանական ցուցակները:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/gorisum-mekhrium-tate%D6%82um-tekhum-avaganinern-yntrvats-en-tee%D6%82-parz-che-te-mekhrium-e%D6%82-tate%D6%82um-or-qakhaqakan-uzhi-nerkayatsutsichy-kglkhavori-hamaynqy>

**24.10.2021**

**Կոռնիձոր գյուղի գերեզմանոցի հարակից տարածքից աղբբեջանական զինված ուժերի ծառայողները հափշտակել են Կոռնիձորի բնակչի պատկանող 107 ոչխար և 5 այծ. ՄԻՊ**

Այսօր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ներկայացվել ահազանգ այն մասին, որ 2021թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը 12-ի սահմաններում ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կոռնիձոր գյուղի գերեզմանոցի հարակից տարածքից աղբբեջանական զինված ուժերի ծառայողները հափշտակել են Կոռնիձորի բնակչի պատկանող 107 ոչխար և 5 այծ:

Կենդանիներին գերեզմանոցի հարակից արոտավայրում արածեցնող քաղաքացին նկատել է, որ աղբբեջանական երկու զինված ծառայողներ իրենց դիրքերից իջել և գալիս են դեպի իր կենդանիները, մոտենալուն պես կենդանիներին քշել-տարել են դեպի իրենց դիրքեր: Այս հանգամանքները, ինչպես նաև այն, որ աղբբեջանական զինծառայողները հափշտակել են հենց նշված քանակի կենդանիներ, ստուգվել են մի քանի աղբյուրների տվյալներով:

Կոռնիձորի բնակիչը ժամը 12:15-ի սահմաններում դեպքի մասին տեղեկացրել է համայնքային մարմիններին: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեղեկությունների՝ դեպքից գրեթե անմիջապես հետո ժամանել ու տեղում ուսումնասիրություններ են իրականացրել ՀՀ և ՌԴ սահմանապահ ծառայողները ու ներկայում ձեռնարկում են համապատասխան քայլեր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը վերծանել է ահազանգի հանգամանքները, որոնք այն մասին են, որ ՀՀ քաղաքացու սեփականության հափշտակությունը տեղի է ունեցել ՀՀ տարածքից: Այդ հանգամանքները փոխակերպված են սույն հայտարարությանը կից հրապարակվող քարտեզի հատվածի վրա:

ՀՀ քաղաքացու նկատմամբ աղբբեջանական զինծառայողների այս հանցագործության ահազանգը պետք է դրվի Աղբբեջանի նկտամամբ մեր պետության պահանջների հիմքում միջազգային հարթակներում: Այն կղրվի նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գեկույցների ու պահանջների հիմքում:

Մարդկանց պատճառով առանձնապես խոշոր չափերի հասնող վնասների հատուցումը կլինի ՀՀ սահմանային բնակիչների իրավունքների ապահովման կարևոր երաշխիք:

Ադրբեջանական զինծառայողների այս հանցավոր արարքները խախտում են ՀՀ քաղաքացիական բնակիչներին կյանքի, սեփականության և այլ կենսական իրավունքները, մարդկանց զրկում են անասնապահությամբ զբաղվելու և ընտանիքի եկամուտը վաստակելու հնարավորությունից զրկելուն՝ անվտանգության խնդիրներին ավելացնելով սոցիալականը:

Ակնհայտ է, որ բոլոր հանցավոր ոտնձգությունների, մարդկանց իրավունքների կոպիտ խախտումների հիմքը, դրանց սնուցման աղբյուրը մեկն է. ադրբեջանական իշխանությունների հայատյաց ու թշնամանքի, էթնիկ գոումների ու ցեղասպան քաղաքականությունը:

Ուստի, պետք է անհապաղ սկսվի Ադրբեջանի հետ ՀՀ սահմանների շուրջ անվտանգության ապառազմականացված գոտի ստեղծելու և ադրբեջանական զինված ծառայողներին ՀՀ գյուղերի հարևանությունից, համայնքների միջև ճանապարհներից անհապաղ հեռացնելու գործընթաց:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այս առաջարկն արդեն տեղ է գտել միջազգային կոնկրետ փաստաթղթում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) 2021թ. սեպտեմբերի 27-ի թիվ 2391 (2021) բանաձևում:

Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան հաղորդումներ կուղարկի նաև միջազգային կառույցներին ու ՀՀ պետական մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին:

Արման Թաթոյան

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան

Աղբյուրը՝ <https://hetq.am/hy/article/137045>

**21.10.2021**

### **Հիմնովին վերանորոգվեց Սյունիքի մարզի Օխտար համայնքի դպրոցը**

👉 Հայ Կրթական հիմնարկության և Արմեն ու Գլորիա Համփար ընտանեկան հիմնադրամի աջակցությամբ հիմնովին վերանորոգվել է Սյունիքի մարզի Օխտար համայնքի դպրոցը:

✅ Վերանորոգման աշխատանքների շրջանակներում ամբողջությամբ նորոգվել է դպրոցի տանիքը, հիմնանորոգվել մարզադահլիճները, կոսմետիկ վերանորոգում է իրականացվել ամբողջ դպրոցում փոխվել է ջեռուցման համակարգը և տեղադրվել նորերը, փոխվել են դռներն ու պատուհանները:

✅ Փոխվել է նաև դասասենյակների հատակը, դպրոցի լուսավորության համակարգը:

Հայրենիքը սկսվում է սահմանից 🇷🇺

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/aefscholarships/posts/4269414556491171>

**21.10.2021**

### **Կարևորվել են Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման աշխատանքները**

Մոսկվայում հոկտեմբերի 21-22-ն անցկացվող Միջազգային մաքսային ֆորումի շրջանակում այսօր Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադալյանը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայության ղեկավար Մեհդի Միրաշրաֆիի հետ:

Հանդիպման ընթացքում կարևորվել են Մեղրիի սահմանային անցակետի վերակառուցմանն ու արդիականացմանը, ինչպես նաև Մեղրի-Նորդուզ անցակետերի միջև տրանսպորտային հոսքերի բարելավմանը միտված աշխատանքները:

2020թ. փետրվարի 7-ին Մեղրիի սահմանային անցակետի արդիականացման և ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման

Եվրոպական բանկի միջև ստորագրվել են «Մեդրիի սահմանային անցակետի ծրագիր» վարկային և դրամաշնորհային համաձայնագրերը՝ ՀՀ ֆինանսների նախարարության ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հայաստանյան գրասենյակի կողմից:

Ծրագրի նպատակն է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության պետական սահմանի Մեդրիի անցման կետի վերակառուցումն ու արդիականացումը, որը պայմանավորված է տարեցտարի տվյալ անցակետով անձանց և ապրանքներ փոխադրող տրանսպորտային միջոցների հոսքերի աճով: Մեդրիի անցման կետի արդիականացումը կնպաստի նաև «Հյուսիս-հարավ» տրանսպորտային միջանցքի ակտիվացմանը և կխթանի վերջինով տարանցիկ փոխադրումները:

Աղբյուրը՝ <https://www.petekamutner.am/mdNews.aspx?sid=cs&nid=8508>

**19.10.2021**

### **Քննարկվեցին մարզում ապաստանած տեղահանվածների խնդիրները**

Հոկտեմբերի 18-ին Սյունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Բաբայանն ընդունել է ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի երեւանյան ներկայացուցիչ Աննա-Կարին Օստին, կառույցի այլ աշխատակիցների, որոնց հետ էին նաեւ գործընկերներ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատնից: Հյուրերը ցանկանում էին տեղեկանալ կազմակերպություն կողմից Սյունիքում Արցախից տեղահանվածներին տրամադրվող աջակցության արդյունավետության մասին, ինչպես նաեւ այն խնդիրների, որոնց պետք է ուշադրություն դարձնեն՝ աջակցության հետագա ծրագրերը մշակելիս:

Նարեկ Բաբայանը շնորհակալություն հայտնեց կազմակերպության գործունեության, մինչ այժմ մարզում բնակվող տեղահանվածներին օգնելու ու նրանց խնդիրները լուծելու հարցում մարզային իշխանության հետ սերտ համագործակցության համար՝ նշելով, որ դեռ երկար ժամանակ այս խավը նման աջակցության կարիք կզգա, ու մարդասիրական ծրագրերի շարունակականություն են ակնկալում:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին մի շարք խնդիրներ, որոնք առնչվում են տեղահանվածներին եւ որոնք պետք է հաշվի առնի ՄԱԿ-ի ՓԳՀ երեւանյան գրասենյակը՝ կառավարության հետ աջակցության ծրագրեր մշակելիս: Դրանք հիմնականում վերաբերում էին ձմեռվա խնդիրներին, մասնավորապես ջեռուցմանն ու ժամանակավոր սեզոնային զբաղվածության բացակայությանը, որը սոցիալական վիճակի սրացման կրեթի, կայուն զբաղվածության ապահովման, զարգացման ու ինտեգրման ծրագրերի ներդրմանը, գյուղական բնակավայրերում գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների, ենթակառուցվածքների ստեղծմանը եւ այլն: Կարեւորվեցին անհատական մոտեցումը՝ կախված նրանից, թե փախստականները մարզի որ բնակավայրում են հաստատվել, ինչպես նաեւ ժամանակավոր կացարաններում ապաստանածների կեցության խնդրի վերջնական լուծման անհրաժեշտությունը:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/1500135480366965>

**18.10.2021**

### **Եղվարդ եւ Ագարակ գյուղերը շուրջօրյա ջրամատակարարում կունենան**

Սահմանամերձ Ագարակ և Եղվարդ գյուղական բնակավայրերում 24-ժամյա ջրամատակարարումն այլևս իրականություն է: Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը հոկտեմբերի 17-ին աշխատանքային այցով եղել է Ագարակ և Եղվարդ գյուղերում,

մասնակցել գյուղերի խմելու ջրի ներքին ցանցի շահագործման հանդիսավոր արարողությանը:

Ծրագրի իրականացման արդյունքում լուծվել է տասնամյակների պատմություն ունեցող խմելու ջրի խնդիրը, բարելավվել է Ագարակ բնակավայրի թվով 160 և Եղվարդ բնակավայրի թվով 300 բնակիչների տարրական կենցաղային պայմանները: Այսուհետ բնակիչներին ջուր մատակարարվելու է ոչ թե շաբաթը մեկ անգամ, այլ ամեն օր:

Գյուղերի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներն իրականացվել են 2020 թվականի սուրվենցիոն ծրագրի՝ պետություն-համայնք համագործակցության արդյունքում:

✔ Կապան համայնքի Եղվարդ գյուղի խմելու ջրագծի կառուցում

👍 Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ 111 385 978 ՀՀ դրամ

👍 Կապան համայնքի ներդրումը՝ 30% կամ 33 415 793 ՀՀ դրամ

👍 ՀՀ Կառավարության ներդրումը՝ 70% կամ 77 970 184 ՀՀ դրամ

👤 Շինարարական կազմակերպությունը՝ «ՇԻՆ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

✔ Կապան համայնքի Ագարակ գյուղի խմելու ջրագծի վերանորոգում և ՕԿՁ-ի կառուցում

👍 Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը՝ 115 793 146 ՀՀ դրամ

👍 Կապան համայնքի ներդրումը՝ 45,2% կամ 52 338 502 ՀՀ դրամ

👍 ՀՀ Կառավարության ներդրումը՝ 54,8% կամ 63 454 644 ՀՀ դրամ

👤 Շինարարական կազմակերպությունը՝ «ՇԻՆ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/958277981432347>

**13.10.2021**

### Տարբեր կարծիքներ Աննա Դանիելյանի հետ

Աղբյուրը՝ <https://youtu.be/ahN-HEOEhoQ?t=177>

**11.10.2021**

### Կապանում մեկնարկել է ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի նիստը

Հայաստանի 2021 թվականի երիտասարդական մայրաքաղաք Կապանում հոկտեմբերի 11-ին մեկնարկեց ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի հերթական նիստը և դրա շրջանակում իրականացվող՝ «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական մրցույթի եզրափակիչ փուլը: Նիստին մասնակցում են ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի անդամներ Հայաստանից, Բելառուսից, Ռուսաստանից, Դրոգստանից, Ուզբեկստանից, Ղազախստանից և Տաջիկստանից:

«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ միջոցառումների նպատակն է՝ «100 գաղափար ԱՊՀ համար» միջազգային եզրափակիչ փուլի իրականացման միջոցով զարգացնել միջազգային համագործակցությունը ԱՊՀ անդամ երկրների երիտասարդների միջև, խթանել երիտասարդների նորարարական մտածողությունը, երիտասարդներին ներգրավել ԱՊՀ մասնակից պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում:

ԿԳՄՄՆ փոխնախարար Արթուր Մարտիրոսյանը ողջունեց նիստի մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց և շատ կարևորեց միջոցառման դերը կապանցիների և հատկապես երիտասարդների համար: Նախարարը նշեց, որ կանեն ամեն ինչ, որ



Հայաստանում անցկացրած ժամանակը լինի շատ արդյունավետ, հետաքրքիր և երկար ժամանակ մնա մասնակիցների հիշողություններում:

«ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհուրդը ամփոփում է նախընթաց ժամանակահատվածում՝ ԱՊՀ երկրներում նախորդ նիստի որոշված միջոցառումների իրականացումը և ուղենշում է հաջորդ ժամանակահատվածի համար անելիքները բոլոր երկրների համար: Նշեմ, որ Հայաստանը առաջիկայում պլանավորում է ունենալ երիտասարդության քաղաքականության պետական ծրագիր՝ առաջիկա հինգ տարիների համար, որտեղ և ներառված են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում նաև երիտասարդության մասին օրենքի ընդունում: Բացի արդյունքների ամփոփումը, նախագիծը շատ լավ հարթակ է միջպետական համագործակցության ծավալման համար՝ բազմակողմ ձևաչափով: Տարբեր երկրներ միմյանցից կարող են փորձառություններ վերցնել, օրինակ՝ մի երկիր կամավորության զարգացման առումով, մյուսը՝ երիտասարդներին ձեռնարկատիրական գործունեության մեջ ընդգրկման առումով, մեր պարագայում, միգուցե, քաղաքացիական ակտիվության առումով: Այսինքն, սա շատ լավ հարթակ է ԱՊՀ շրջանակում երկրների միջև երկխոսության և առհասարակ հումանիտար համագործակցության», - ասաց Մարտիրոսյանը:

Նա հավելեց, որ նախագծի շրջանակներում պետություններին հնարավորություն է տրվում ինքնուրույն որոշելու այն մեխանիզմները, որով կընտրվեն լավագույն ծրագրերը: Մինչև այժմ ընտրությունը կատարվել է գիտական նորույթի հիմքով, սակայն ապագայում, փոխնախարարի գնահատմամբ՝ նույնքան կարևորություն կտան սոցիալական նորարարությանը: «Այս հարթակը լայն հնարավորություն է տալիս, որ դու տեսնես այլ երկրներում ինչ հետաքրքիր նորամուծություններ կան, որոնք կարող ես կիրառել նաև քո երկրում: Հայաստանի մի առանձնահատկությունն է նշեմ. մենք մտածում ենք լավագույն տեղերը զբաղեցրած մասնակիցներին ոչ միայն խրախուսել, այլ նաև որոշակի գումար նախատեսել, որպեսզի նրանք իրենց գաղափարները իրենց իսկ համայնքում, բնակության վայրում կարողանան իրականացնել: Ամբողջ ԱՊՀ-ից շուրջ 50 հայտ ունենք և հույս ունենք, որ Հայաստանից ներկայացված հայտերից մի քանիսը կամ գոնե մեկը կարժանանա լավագույնի տիտղոսին», - ասաց փոխնախարարը:

ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նախագահ Տատյանա Կովալևան նշեց, որ խորհրդի կազմում ընդգրկված են ԱՊՀ մասնակից երկրների երիտասարդության պետական քաղաքականության մշակմամբ զբաղվող պետական կառավարական կառույցներն ու գերատեսչությունները:

«Կապանում անցկացվող խորհրդի նիստը յուրահատուկ է, քանի որ անցկացվում է ԱՊՀ հիմնադրման 30 ամյակի շրջանակում: Մենք, ըստ էության, այժմ ամփոփում ենք երիտասարդության ոլորտում ԱՊՀ մասնակից պետություններում կատարված աշխատանքները և կարող ենք արձանագրել, որ կա նկատելի ձեռքբերում: Մա նաև փորձի փոխանակման շատ լավ հարթակ է առավել հաջողված նախաձեռնությունները միմյանցից վերցնելու առումով», - նշեց Կովալևան:

Ըստ նրա՝ խորհրդանշական է նաև միջոցառման անցկացումը Հայաստանի հարավային այս քաղաքում՝ Կապանում, որն այս տարվա ՀՀ երիտասարդական մայրաքաղաքն է: «Մենք այժմ խորհրդի նիստում քննարկում ենք ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաքի նախագիծը, որի հիմքում դրված են մասնակից երկրների երիտասարդական մայրաքաղաքներ հռչակելու ծրագրերի փորձը», - նշեց նա:

«100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական նախագծի եզրափակիչ փուլին մասնակցում են վերոնշյալ երկրներում միջազգային երիտասարդական նախագծի ազգային փուլերի հաղթողները: Իրենց երկրներում հաղթող ճանաչված գաղափարների հեղինակները Հայաստանում անցկացվող միջպետական փուլում ներկայացնելու են նոր

գաղափարներ ավելի քան 10 անվանակարգերում: Մրցույթի փորձագիտական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են 3 ներկայացուցիչներ Հայաստանից, մեկական ներկայացուցիչներ Ռուսաստանից և Բելառուսից, կընտրի յուրաքանչյուր անվանակարգի լավագույն գաղափարը:

Միջոցառման շրջանակում ԱՊՀ մասնակից պետությունների պատվիրակների համար նախատեսված են նաև էքսկուրսիաներ և մշակութային ծրագիր, որով մասնակիցները հնարավորություն կունենան ծանոթանալու Կապանին, հայկական մշակույթին և խոհանոցին:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1065290/>

**10.10.2021**

### **Արցախից տեղահանված արդեն 4 ընտանիք ապահովվել է կացարանով**

Կապանի համայնքապետարանի նախաձեռնությամբ և «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության ֆինանսական օժանդակությամբ իրականացվող ծրագրով՝ Արցախից տեղահանված և Կապան համայնքում մշտական բնակություն հաստատած 4 բազմազավակ ընտանիք արդեն իսկ ապահովվել է կացարանով: Ընտանիքներին տրվել է նաև գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորություն և միջոցներ՝ ըստ նրանց նախապատվության: Մոցիալ-տնտեսական վիճակի բարելավման նպատակով ընտանիքներին աջակցություն է ցուցաբերել «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն՝ տրամադրելով խոշոր եղջերավոր կենդանիներ:

Աշխատանքային այցի շրջանակներում Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանը հյուրընկալվել է Դավիթ Բեկ գյուղում բնակություն հաստատած Հովհաննիսյանների, Այվազյանների և Կարապետյանների ընտանիքներում, ծանոթացել նրանց կենսապահովման պայմաններին և կարիքներին:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/952925571967588>

**03.10.2021**

### **Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը Կապանում**

Այսօր՝ հոկտեմբերի 3-ին, Կապան համայնքի ղեկավարը ընդունել է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Մարի Լու Փափազյանին: Հանդիպման ժամանակ քննարկվել է մարզկենտրոնում Թումո կենտրոնի ստեղծման հետ կապված հարցեր: Ողջունելով հյուրերին՝ համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց, որ հատկապես այս ժամանակահատվածում՝ պատերազմից հետո, Թումոն մտադիր է իր գործունեությունը ծավալել սահմանամերձ Կապանում: Գևորգ Փարսյանը կարեւորեց ուսումնական կենտրոնի աշխատանքը եւ իր պատրաստակամությունը հայտնեց ամեն հարցում աջակցելու ծրագրի կյանքի կոչմանը:

Թումոն անվճար կրթական փորձառություն ստանալու հնարավորություն կտա 12-18 տարեկան պատանիներին: 1500 սաների համար է նախատեսվում կենտրոնը:

Կողմերը քննարկել են կրթական կենտրոնի տեղակայման հետ կապված հարցեր:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/Kapanmunicipality/posts/948820915711387>

**02.10.2021**

### **Իշխանությունը նպատակ է դրել ամեն գնով Սյունիքի ընտրություններում հաղթանակ տանել**

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. ««Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունը նպատակ է դրել ամեն գնով Սյունիքի մարզի մի քանի համայնքապետերի

ընտրություններում բացարձակ հաղթանակ ապահովել, այդ նպատակով ՀՀ նախկին փոխվարչապետ Տիգրան Ավինյանին ու ԱԺ իմքայլական նախկին պատգամավոր Արման Բոշյանին իշխանությունը գործուղել է Սյունիք:

Իշխանության մեր աղբյուրները փոխանցում են, որ գրեթե ամեն շաբաթ նրանց կարելի է հանդիպել այնտեղ տարբեր շրջանակների հետ հանդիպելիս, որոնց մի մասը գաղտնի են պահում, մի հատվածն էլ հրապարակում են: Ավինյանը Սյունիքի իրենց թիմակիցներին հորդորում է ակտիվանալ, աշխատել ամեն գնով Սյունիքի Գորիս, Մեղրի, Տաթև, Տեղ ու Կապանի համայնքներում իրենց տիրապետությունը հաստատելու համար: Հիշեցնենք, որ հոկտեմբերի 17-ին եւ նոյեմբերի 14-ին նշված համայնքներում արդեն առաջին անգամ համամասնական ընտրակարգով ընտրություններ պետք է կայանան: Հիմա իշխանությունները որոշել են գիշեր-ցերեկ անցկացնել մարզում իրենց համար ցանկալի արդյունքն ապահովվելու համար»:

Աղբյուրը <https://armlur.am/1138693/>

**01.10.2021**

### **Ռուս միլիարդատերը՝ Չանգեզուրի պղնձամոլիբդենային նոր բաժնետեր**

Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) 60 տոկոսի սեփականատեր է դարձել ռուս միլիարդատեր Ռոման Տրոցենկոն, որի «Գեոպրոմայնինգ գոլդ» ընկերությանը պատկանում են նաև Սոթքի ոսկու հանքավայրն ու Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը: 60 տոկոս բաժնետոմսերի 25 տոկոսը նա նվիրաբերել է ՀՀ կառավարությանը, իսկ կոմբինատում բաժնետոմսերը ձեռք է բերել Մոսկվայում գրանցված «Արդյունաբերական ընկերություն» բաժնետիրական ընկերության միջոցով:

ԶՊՄԿ-ում Տրոցենկոյի բաժնետոմսերի առկայության մասին [հաղորդեց](#) ՀՀ կառավարությունը: Պղնձամոլիբդենայինում 60 տոկոսի հասնող բաժնետոմսերի առքուվաճառքը, ըստ կառավարության, կայացել է երեկ՝ սեպտեմբերի 30-ին, իսկ կառավարությանը նվիրած բաժնետոմսերը կազմում են ամբողջ կոմբինատի բաժնետիրական կապիտալի 15 տոկոսը: Մինչև 2020-ը կոմբինատի մեծամասնական բաժնետերը գերմանական «Քրոնիմետ» ընկերությունների խումբն էր, որից ԶՊՄԿ-ն բաժնետոմսերի հետգնում էր իրականացրել: Երեկ այդ բաժնետոմսերը տեղաբաշխվել են՝ անցնելով ռուսական ընկերությանը: Ըստ կառավարության հաղորդագրության՝ Տրոցենկոն ուրախությամբ է տեղեկացրել, որ իրենց գնած բաժնետոմսերի մի մասը փոխանցել են կառավարությանը:

*«Մենք մտադիր ենք ընդլայնել համագործակցությունը ՀՀ կառավարության հետ, և սա ավելի լայն ներդրումային տեսլականի առաջին քայլն է: Այս ամենից կշահի Հայաստանի Հանրապետությունը, ժողովուրդն ու մեր բաժնետերերը, իսկ Հայաստանի տնտեսության համար կբացվեն նոր հնարավորություններ: Նպատակ ունենք առաջիկա տարիներին Հայաստանում սկսել նոր պղնձաձուլարանի կառուցումը»*

Փոխվարչապետ Սուրեն Պապիկյանն իր հերթին հայտնել է, որ տարածված պրակտիկա է խոշոր հանքարդյունաբերական ընկերությունում պետական բաժնեմաս ունենալը:

Ռոման Տրոցենկոն [միլիարդատեր](#) է, նրան է պատկանում AEON Corporation-ը, որն իր մեջ ներառում է 14 օդանավակայան, նավահանգիստներ ու բազմաֆունկցիոնալ բիզնես կենտրոններ Եվրոպայում: Ըստ Forbes-ի՝ Տրոցենկոյի ունեցվածքը գնահատվում է 1,3 միլիարդ դոլար:

ԶՊՄԿ-ում բաժնետոմսերի այս փոփոխությունն ըստ էության չի ազդել մյուս բաժնետերերի ունեցած մասնակցության չափի վրա. «Չանգեզուր մայնինգ» ընկերության միջոցով կոմբինատի 12,4 տոկոսը պատկանում է Ռուսաստանի առողջապահության և

սոցիալական հարցերի զարգացման նախկին նախարար Միխայիլ Զուրաբովին, իսկ 12,5 տոկոսը՝ «ԱՄՓ հոլդինգ» ընկերությանը, որի սեփականատերերն են Կարեն Հակոբյանը՝ ԱԺ «Հայաստան» դաշինքի պատգամավոր Վահե Հակոբյանի եղբայրը, Մհեր Պոլոսկովը՝ կոմբինատի նախկին գլխավոր տնօրենն ու Նարեկ Ամբարյանը՝ զինվորական դատախազ Տիգրան Ամբարյանի եղբայրը:

Կոմբինատում բաժնետոմսերի առյուծի բաժինը ձեռք բերելու նպատակին էր ձգտում նաև Միխայիլ Զուրաբովը: Օգոստոսի 25-ին [գրել](#) էինք, որ Զուրաբովը «Զանգեզուր մայնինգ»-ի միջոցով մի քանի դատական հայց է ներկայացրել ընդդեմ ԶՊՄԿ-ի՝ պահանջելով նախկինում «Քրոնիմետ»-ից հետո գնված բաժնետոմսերը նախապատվության իրավունքով օտարել իրեն: Փաստացի, կոմբինատի բաժնետոմսերի հերթական խոշոր գործարքը շրջանցել է Զուրաբովին, ու նա չի կարողացել բաժնետոմսերի ձեռքբերմամբ դառնալ մեծամասնական բաժնետեր: Դատական հայցերի ճակատագիրը դեռևս անորոշ է:

ԶՊՄԿ-ում պետական բաժնեմաս ունենալը կառավարությանը թույլ է տալու մասնակցել բաժնետերերի ժողովներին, նաև կոմբինատի տնօրենների խորհրդում ունենալ ձայներ: Կառավարությանը նվիրատվություն կատարելու պայմանագիրը նախատեսվում է ստորագրել տասը օրվա ընթացքում:

Աղբյուրը՝ <https://www.civilnet.am/news/634685/%D5%BC%D5%B8%D6%82%D5%BD-%D5%B4%D5%AB%D5%AC%D5%AB%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A5%D6%80%D5%A8%D5%9D-%D5%A6%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A5%D5%A6%D5%B8%D6%82%D6%80%D5%AB-%D5%BA%D5%B2%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B4%D5%B8%D5%AC%D5%AB%D5%A2%D5%A4%D5%A5%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%A2%D5%A1%D5%AA%D5%B6%D5%A5%D5%BF%D5%A5%D6%80/>

Կազմեց Ս. Ալավերդյանը